

**Պետական աջակցության հաշիվ
Տեղեկատվական ամփոփագիր**

03.12.2018թ.

Պետական աջակցության հաշիվը (այսուհետ՝ Հաշիվ) Կոնվերս Բանկում (այսուհետ՝ Բանկ) երեխայի անվամբ բացված հատուկ հաշիվ է, որին փոխանցվում է երեխայի ծննդյան միանվագ նպաստի մի մասը, և որում առկա միջոցները տնօրինումը սահմանափակված է ՀՀ օրենսդրությամբ:

	Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը (ՀՀ դրամ)	Կանխիկ վճարվող գումարի չափը (ՀՀ դրամ)	Պետական աջակցության հաշվին փոխանցվող գումարի չափը (ՀՀ դրամ)
Երրորդ և չորրորդ երեխայի ծննդյան դեպքում	1,000,000	500,000	500,000
Հինգերորդ և հաջորդ երեխայի ծննդյան դեպքում	1,500,000	500,000	1,000,000

1. Հաշվի տեսակը՝ խնայողական:

2. Հաշվի արժույթը՝ ՀՀ դրամ:

3. Պետական աջակցության հաշվի բացում.

3.1. Հաճախորդը այցելում է Բանկ և Պետական աջակցության հաշիվ բացելու նպատակով դիմում է սպասարկողին:

3.2. Հաճախորդը սպասարկողին ներկայացնում է անհրաժեշտ փաստաթղթերը:

3.3. Հաճախորդի և Բանկի միջև կնքվում է Պետական աջակցության հաշվի պայմանագիր

3.4. Պետական աջակցության հաշիվը բացելուց հետո Հաճախորդին տրվում է Պետական աջակցության հաշվի մասին տեղեկանք՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) տարածքային բաժին ներկայացնելու համար:

3.5. Հաշվետիրոջ անվամբ փոխանցված դրամական միջոցները մուտքագրվում են Հաշվին ոչ ուշ, քան համապատասխան Դրամական միջոցների ընդունման օրվան հաջորդող բանկային օրը:

4. Պետական աջակցության հաշվի փակում.

4.1. Պետական աջակցության հաշիվները ենթակա են փակման հետևյալ դեպքերում՝

4.1.1. Պետական աջակցության հաշվի բացման օրվանից 6 ամսվա ընթացքում հաշվին կրեդիտագրում չլինելու դեպքում:

4.1.2. Պետական աջակցության հաշվին առկա միջոցները սպառվելու (գրոյացվելու) դեպքում, որից հետո Բանկն այդ մասին տեղեկացնում է Ծառայությանը:

4.1.3. Ծառայության պահանջագրի հիման վրա՝ պահանջագիրը ներկայացնելու օրվան հաջորդող երրորդ բանկային օրվանից ոչ ուշ:

5. Հաշվի տնօրինում.

5.1. Հաշվետերն իրավունք ունի առանց սահմանափակումների տնօրինելու ընտանեկան դրամագլուխը 18 տարին լրանալուց հետո:

5.2. Ընտանեկան դրամագլուխը, մինչև հաշվետիրոջ 18 տարին լրանալը, անկանխիկ վճարումներ կատարելու միջոցով տնօրինվում է Հաճախորդի կողմից հետևյալ ուղղություններով՝

5.2.1. ՀՀ-ում բնակարանի, բնակելի տան գնման, կառուցման համար տրամադրված և հիփոթեքով ապահովված վարկի տոկոսագումար վճարելու և մայր գումար մարելու համար, եթե վարկառուն հաշվետիրոջ ծնողն է կամ որդեգրողը:

5.2.2. Հաշվետիրոջ կամ հաշվետիրոջ կարգաթիվը որոշելու համար հաշվի առնված ընտանիքի անդամի, հաշվետիրոջ օրինական ներկայացուցչի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշմամբ սահմանված ուսումնական հաստատությունում ուսումնառելու ընթացքում ուսման վարձը (նախադպրոցական ուսումնական հաստատության վարձավճարը) վճարելու համար:

5.2.3. Հաշվետիրոջ ծնողին կամ որդեգրողին տրամադրված վարկի տոկոսագումար վճարելու և մայր գումար մարելու համար, եթե վարկի տոկոսադրույքը մասնակի սուբսիդավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 31-ի N 349-Ն որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի համաձայն և առկա է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի եզրակացությունը վարկը նպատակային օգտագործելու վերաբերյալ:

5.2.4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի N 1017-Ն որոշմամբ սահմանված հեռավոր, սահմանամերձ, բարձրլեռնային, լեռնային, մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերում, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Այգուտ, Լոռու մարզի Եղեգնուտ, Սյունիքի մարզի Տաթև, Տավուշի մարզի Իծաքար բնակավայրերում բնակարանի կամ բնակելի տան կամ այլ անշարժ գույքի գնման համար, եթե գնորդը հաշվետիրոջ ծնողն է կամ որդեգրողը (գումարը անշարժ գույք վաճառողի բանկային հաշվին փոխանցելու միջոցով):

Ցանկացած բանկային հաշվի փոխանցելու միջոցով պարբերական կամ միանվագ վճարումներ կատարելով՝ **ոչ ավելի, քան ամսական 50,000 ՀՀ դրամ**: Ընդ որում, ընտանեկան դրամագլուխը տնօրինելու համար ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող անձը Բանկին ներկայացնում է ընտանեկան դրամագլխից պարբերական վճարումներ կամ միանվագ վճարում կատարելու հանձնարարական: Բանկը մերժում է հանձնարարականը, եթե դիմողն ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող անձ չէ: Հանձնարարականի հիման վրա ընտանեկան դրամագլխից վճարումներ են կատարվում (գումարը փոխանցվում է ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող անձի ներկայացրած բանկային հաշվին)՝

1) պարբերական՝ հանձնարարականը ներկայացնելու օրվան հաջորդող 3-րդ աշխատանքային օրվանից ոչ ուշ, եթե հանձնարարականում նշված չէ այդ օրվան հաջորդող այլ օր, իսկ հանձնարարական ներկայացնելու ամսվան հաջորդող ամիսների համար՝ յուրաքանչյուր ամսվա 3-րդ աշխատանքային օրվանից ոչ ուշ, եթե հանձնարարականում յուրաքանչյուր ամսվա համար նշված չէ այլ օր (բոլոր ամիսների համար՝ նույն օրը)

2) միանվագ՝ հանձնարարական ներկայացնելու օրվան հաջորդող 3-րդ աշխատանքային օրվանից ոչ ուշ, եթե հանձնարարականում նշված չէ այդ օրվան հաջորդող այլ օր:

5.2.5. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի թույլտվությամբ ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող անձի դիմումի հիման վրա ընտանեկան դրամագլուխը կարող է ծախսվել հաշվետիրոջը, հաշվետիրոջ կարգաթիվը որոշելու համար հաշվի առնված ընտանիքի անդամին, հաշվետիրոջ ծնողին, որդեգրողին կամ խնամակալին Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշմամբ սահմանված համավճարը վճարելու համար, եթե դիմելու օրվա դրությամբ հաշվետերն ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված է «0»-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի կազմում և հաշվետերը, հաշվետիրոջ կարգաթիվը որոշելու համար հաշվի առնված ընտանիքի անդամը, հաշվետիրոջ ծնողը, որդեգրողը կամ խնամակալը չունեն այդ բժշկական օգնությունը պետական պատվերի կամ բժշկական ապահովագրության շրջանակներում ձեռք բերելու իրավունք:

Սակագներ

Հաշվի բացում	0
Հաշվի տեղեկանքի տրամադրում	0
Հաշվի սպասարկում	0
Հաշվի մնացորդի նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույք	7.5% տարեկան մուտքագրվում է հաշվին եռամսյակը մեկ
Փոխանցումների իրականացում	0
Քաղվածքի/քաղվածքի կրկնօրինակի /փոստային, էլեկտրոնային կամ առձեռն/ տրամադրում	0
Հաշվի նվազագույն մնացորդ	0
Հաշվի փակում	0

Ուշադրություն`

Հաշվեգրման ենթակա տոկոսների դիմաց գանձվում է եկամտային հարկ: ՀՀ տարածքում տոկոսների համար եկամտային հարկը կհաշվարկվի 10% դրույքաչափով, իսկ ԼՀՀ տարածքում` 5% դրույքաչափով:

Բանկն իրավունք ունի փոփոխելու ցայահանջ ավանդների և բանկային հաշվում եղած դրամական միջոցների համար վճարվող տոկոսների չափը, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Տարեկան տոկոսային եկամտաբերություն

Ձեր հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանայիք Դուք, եթե Ձեր ավանդի դիմաց ստացված տոկոսագումարները վերաներդնեիք ավանդի տեսքով:

Տարեկան տոկոսային եկամտաբերության չափի հաշվարկման համար հիմք է ընդունվում ՀՀ ԿԲ ««Բանկային ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկումը» Կանոնակարգ 8/02»-ով սահմանված հետևյալ բանաձևը`

$$APY=(1+r/n)^n-1,$$

որտեղ`

- APY - տարեկան տոկոսային եկամտաբերությունն է.
- r - տարեկան պարզ տոկոսադրույքն է.
- n - մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է:

Տվյալ դեպքում տարեկան պարզ տոկոսադրույքը կազմում է 7.5%, մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունը` 4, հետևաբար տարեկան տոկոսային եկամտաբերությունը կազմում է 7.71%

Հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերը.

- Հաճախորդի և հաշվետիրոջ անձը հաստատող փաստաթղթերը:
- Հաճախորդի և հաշվետիրոջ հանրային ծառայությունների համարանիշերը (կամ վերջիններս չստանալու վերաբերյալ տեղեկանքները) կամ նույնականացման քարտերը:
- Հաշվետիրոջ ծնողը, ինամակալը կամ որդեգրողը հանդիսանալու փաստը հավաստող փաստաթուղթը:
- Բանկի կողմից տրամադրված Պետական աջակցության հաշվի բացման դիմումի լրացված ձևաթուղթը:

Ծանուցում ավանդների հատուցման երաշխավորման պայմանների եվ կարգի մասին

Ձեր ավանդի հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ):

Ավանդի արժուքային կառուցվածքը		Ավանդի երաշխավորման առավելագույն չափը
Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ		10 միլիոն ՀՀ դրամ
Եթե նույն բանկում ունեք միայն արտարժուքային ավանդ		5 միլիոն ՀՀ դրամ
Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից ավելի է	10 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)
	Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից պակաս է	5 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժուքային ավանդը՝ 5 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ՀՀ կենտրոնական բանկ /ք. Երևան, Վ. Սարգսյան 6, հեռ. (+37410) 58-35-14, (+37410) 59-26-64/:

Ծանուցում Ֆինանսական համակարգի հաշտարարի վերաբերյալ

Տեղեկացնում ենք, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից Ձեզ մատուցվող ծառայությունների հետ կապված տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված համաձայնագրի համաձայն՝ Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Հասցե՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Մ. Խորենացու փող., 15 «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ էլ. փոստ՝ info@fsm.am

Հեռախոս՝ (+37460) 70-11-11

Ֆաքս՝ (+37410) 58-24-21

Կապ Բանկի հետ

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք՝

- այցելել Բանկի <https://www.conversebank.am> ինտերնետային կայք
- այցելել Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ
- զանգահարել +374 10 511211 հեռախոսահամարով
- Viber՝ +374 95 511211
- Skype՝ conversebank-callcenter